

Չէրմիկի<sup>1)</sup>։ Պարս քաղաքէն դէպ ի հարաւային արեւելք չորս ժամու չափ հեռաւորութեամբ հայաբնակ գիւղ մի է, ձորի մէջ ամրացած. ունին եկեղեցի մի յանուն սրբոյն Յակովբայ Մծբնայ հայրապետին. ուսումնարան չունին. մի վարժապետ քանի մի մանուկներ (քսանի չափ) կը վարժէ Հայերէն ընթարցանութեան մէջ։

Լոյս - Աղբխր. Աղայ - Յեվի. Չէրմէլի և Պէրնէ գիւղերու մէջտեղն երկու բարձր բլուրներ կան, Աղայ - Յեվի անուն. այս բլուրներէն բարձրագունին գագաթումն երեք գերեզմաններ կան, և երկրորդի գագաթումն վանքի աւերակ<sup>2)</sup>։ Բլուրներու ստորոտում ևս կայ աւերակ գիւղի և վանքի<sup>3)</sup> և գերեզմանատուն Հայոց։ Գերեզմանատան մօտ կայ և աղբիւր մի ցամաք Լոյս - Աղբխր անուն, որուն համար տեղացիք կաւանդեն թէ ամեն եօթն տարին անգամ մի կը բղխէ. և շատ ուխտաւորներ կը յաճախեն այստեղ. մանաւանդ բորոտների, որ աղբիւրի ջրովն լուացուելով կը սրբուին։

Կ. Վ. Ս.

### ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Անուրանալի է ամեն մտածող Հայի համար թէ ազգային լուսաւորութեան գործն ի՞նչ անօրինակ զարկ ստացաւ ներկայ Վեհափառ Վաթորիկոսի օրով։ Բայց թէ մեր դպրոցներն և մեր մանկավարժներն ըմբռնած են և կգործադրեն արդեօք Վեհափառ հայրապետի ցանկացած ուղղութիւնը, որով հասնէինք մի բազդաւոր օրը, Նորա առաջադրած ազգային նպատակներին, սորա համար ամենքը լըջմիտ կերպով պիտի խորհեն թէ ի՞նչպէս ուղղելու է դպրոցը։ Ինչ որ ներկայումս կնկատենք թէ հասակաւորների ոմանց և թէ դեռահասների կողմից — անտեղի յուզմունք, անորոշ պահանջմունք, անզուսպ վարմունք — իւրաքանչիւր մտածող և զգացող անձի մէջ ծանր մտածմունք և վիշտ կ'արուցանեն, մանաւանդ որ այս բոլորն առաւելապէս արձագանգ կգտնէ պատանի անհաստատուն և դիւրազգաց ուղեղների մէջ։ Դպրոցն իւր կողմից անհոգ մնալ կ'արունակէ և միջոցներ չէ գործ զնում պատասպարել իւր սաներին թէ ներքին և թէ արտաքին վատ ազդեցութիւնների դէմ։ Իբրեւ օրինակ թէ ի՞նչպէս պիտի ներգործեն դպրոցները կարօղ եմ յիշել միայն Ռուսիայի Խարկովի համալսարանը, որի պրօֆէսսօրները վերջին ժամա-

1 Այս անունն արդի տաճկերէն լեզուի մի պարզ բառի նշանակութեամբ ստացաւ ևս որ կամ վտանգաւոր կը նշանակէ։

2 Որեւ է ծանօթութիւն չգոյնուեցաւ թէ ինչ գերեզման կամ վանք էր։

3 Գուցէ Ութմիս կամ Ոթմուս, գիւղն այս լինի, ուստի էին Յովհաննէս եւ Տրդատ կաթողիկոսունք, ուր եւ Յովհաննէս կաթողիկոս թաղուեցաւ։



նախուժ յօժարեցին իմաստալի մի յորդորականով յիշեցնել իւրեանց ասներին նոցա պաշտօնը և առաջիկայ պարտքեր և բարձր նպատակներ։ Ասիսոս որ գիտութեան ներկայացուցիչների նոյն հոգեբուզիս յորդորականն ամբողջապէս չենք կարող հրատարակել, որ կհասկացնէր թէ ինչ պարտքեր ունին մանկավարժներն առ իւրեանց աշակերտներ։ Պրօֆէսորները կ'յորդորեն ուսանողներին քաղաքակրթութեան զարգացմանը ծառայելու համար պատրաստվել հիմնաւորապէս, որ կարողանան հնարաւոր եղածին չափ նպաստել հասարակական բարօրութեանը։ Իբրեւ բըժիշկներ, իբրեւ ուսուցիչներ, կասեն, իբրեւ դատաւորներ, իբրեւ լուսաւորված մարդիկ, դուք պիտի աղատէք ձեր համաքաղաքացիներին ֆիզիքական տանջանքից, տգիտութենից, անիրաւութենից, մտաւորական աղքատութենից։ Ազտնվին արդեօք մօրդին առաւել արժանաւոր խնդիրներ և առաւել բաղմակողմանի գործունէութիւն։ Հզօրացրէք ձեր մէջ խելքը, անկեղծ և անաչառ սէրը դէպի հայրենիք, պատուի զգացումն, արդարութիւն և բոլոր ձեր բարոյական ոյժեր, աշխատեցէք կրթել ձեր մէջ յարգանք աւ օրէնք և կարգ։ . . . . . Բայց շատ երիտասարդներն արդեօք ընդունակ պիտի լինին այս ճշմարիտ և սրտաբուզիս ձայնին հետեւելու։ Շատ երիտասարդներն արդեօք ունին այսպիսի հրաւեր ընդունելու և իրագործելու հիմեր։ Այս խնդրի պատճառով ակամայ ուշքս կ'զարձնեմ մեր կրթութեանը և կ'տեսնեմ նորա անկանոնաւորութիւն։ Մեր դաստիարակութեան գլխաւոր պակասութիւնը բարոյական—քրիստոնէական սկզբունքի պակասաւորութիւնն է։ Ամեն ազգերի մէջ կըրթութիւնն համաձայն կընթանար ազգի բարոյական—կրօնական ուղղութեան հետ։ Նորա հաւատալիքների և համոզմունքի հետ, և պատանին կեփվէր նոցա մէջ և սորանով նա կ'կրթէր իւր մէջ այն խորին սէրը դէպի իւր հայրենիքը, որ շատերին կ'սիրէր և կ'յափշտակէր այն աստիճան, որ անձնանուէր կ'լինէին հայրենիքի օգտի համար։ Այսպէս էր և մեր մէջ, երբ մեր նախնիները վառված էին կրօնական զգացմունքով։ Բայց այժմ անբաղդաբար ուրիշ բան կ'նկատվի մեր մէջ. այն ինչ որ մեր ժողովրդի կենսական տարր է, որով նա կ'զատիարակվէր, որով նա անուն կ'վաստակէր և որով նա հզօր էր ի հնուց—առաքելական կրօնը—կարծես թէ կ'ստուերարկվի կանտեսվի։ Սորանից կ'ծագի այն, որ երիտասարդ գլուխը չէ կարողանում ուղիղ ճանապարհ գտնել, զարգացած խելքը կ'մնայ չզարգացած սրտով, սիրտը ընդունակ չէ ուրիշների հետ կանոնաւոր և ճշմարիտ յարաբերութիւններ ունենալու, կեանքի մասին ստացած միակողմանի հայեացքը կ'առաջնորդվի միայն եսական նպատակներով։ Փորձը ցոյց կ'տայ մեզ թէ ինչ տխուր հետեանքներ ունի այսպիսի կրթութիւնը—ընդհանուր ազգային միութենից բաժանումն և պառակտումն, յուսահատական զգացումն կեանքի ամենափոքր անյաջողութիւնների մէջ, ծուլութիւն և դատարկութիւն շատ գործերի մէջ։ Սակայն կ'ցանկայինք, որ կրթութիւնն առաւել կանոնաւոր և օգտաւէտ կեր-



պով ուղղէր մեր պատանի սերունդը, կցանկայինք որ զպրոցն աւելի լրջմտութեամբ պատրաստէր մեր պատանեակներին հասարակական գործունէութեան համար և նոցա աւելի կանոնաւոր հայեացք հաղորդէր կեանքի վերայ: Սա է կրթութեան խնդիրը: Բաւական չէ զարգացնել մանուկների մտաւորական կողմը, այլ աչքի առաջ ունենալու է մանուկն իրրեւ բարոյական անձն և այնպէս դաստիարակելու է նորան: Իսկ սորա համար կարեւոր է աւելի կանոնաւոր կերպով ծանօթացնել նոցա կրօնի և բարոյական սկզբունքի ոգու հետ: Ճանաչեցնել նոցա քաղաքակրթութեան սկզբունքը, վառել նոցա մէջ ազգային քաղաքակրթութեան նախանձ, զարթեցնել նոցա մէջ հայրենասիրութեան ոգի և այսպէս նոցա բուն հայ քրիստոնեաներ պատրաստել: Եւ այս հիմերի վերայ հաստատված դաստիարակական գործը յառաջ գնալու է և հարկաւոր պտուղներ բերելու է, այսինքն յարգանք առ օրէնք և կարգ, պատիւ առ ծնողներ և հասակաւորներ, ազնիւ պատուասիրութեան զգացմունք, որով նա միշտ զգաստ լինի նախատելի գործ չգործելու, աշխատասիրութիւն, անկեղծութիւն և քաղաքացի լինելու ամեն կարեւոր յատկութիւններ: Եթէ մենք չենք զարգացնում մանուկների մէջ այս հիմնական կղբունքը, զուր է բոլորովին լաւագոյն ապագային յուսալ, զուր է կարծել թէ ներկայ ձեռով կրթված պատանիները բարի և օգտաւէտ քաղաքացիներ և հասարակական գործօններ պիտի լինին: Առաձն ևս կասէ թէ ինչ որ սերմանես նոյն և հնչելու ես:

Զուր չէր որ վրդովվեցաւ Գերմանիան տեսնելով, թէ ուր կարօղ է հասցնել և արդէն հասցրեց նորան մանուկների անկրօն կրթութիւնը, թէև ցաւալի է, որ նա ստիպվեցաւ ծայրայեղ միջոցներին դիմել: Նշանաւոր են այս կողմից Ալիշէլմ կայսեր վերջին հրովարտակի խօսքերը, որով նա ազգային ժողովի ուշք կհրաւիրէ կրօնական կրթութեանը: Նոյնպէս վրդովված են Ռուսիայի ողջամիտ և հայրենասէր մարդիկ, որոնք սկսած են խօսել և գրել թէ որքան կարեւոր է բարոյական կրօնական զգացմունքը զօրացնել մանուկների մէջ: Իսկ հասարակապետական Փրանսիայի մէջ ալատամիտ Ալիկտոր Հիւգօն ահա ինչ կասէ կրօնական կրթութեան մասին «Մօնիտօր Իւնիվերսէլ» (Moniteur Universel) լրագրի մէջ: «Իմ կարծիքով, կասէ, կրօնական կրթութիւնն այժմ առաւել կարեւոր է քան թէ երբ և իցէ: Մեր ժամանակի անբաղդութիւնն է որ մարդիկ ոմանք կձգտեն ցոյց տալ թէ ամեն բան այս կեանքում կվերջանայ: Մարդի վերջնական նպատակը նիւթական կեանք համարելով մենք կբաղմացնենք մարդի թըշուառութիւնները: Զբաւորի բոլոր կմեծացնենք ոչնչութեան անտանելի ծանրութեամբ և այս տանջանքի երկիրը նորա համար վերջին անելանելի յուսահատութեան տեղ կշինենք: Սորանից կծագեն բոլոր հասարակական գղղղմունք: Ես կցանկայի բարւոքել նոցա միճակը, որոնք կտանջվին այս կեանքում և կյիշեմ որ բարենորոգութիւններից առաջինն այն է, որ նոցա վերադարձնենք յոյս: Իմ վերաբերմամբ, ես խորին կերպով կհաւատամ առաւել լաւ (երկնային) աշխարհին և կարօղ եմ ասել, որ սա իմ



խելքի բարձր համոզումն է, նոյնպէս և իմ հոգու ամենամեծ մխիթարութիւն: Ուստի անկեղծօրէն կցանկամ, կասեմ աւելի—բորբոք սրտով կփափագեմ կրօնական դաստիարակութիւն: »

Մեր Աւհափառ ազգապետը, որ ամենայն կերպով հնարներ կմտածէ հայկեան ազգը բարոյապէս վերականգնելու, քանիցս ցաւով նկատած է, որ մեր մէջ լոկ անունով է կարծես կրօնական կրթութիւնը: Ամեն դպրոցների մէջ կաւանդվի ի հարկէ կրօնը և առաջին առարկայ կհամարվի: Աշակերտն ամեն դպրոցում կպատմէ մեր Փրկչի այս կամ այն գործը, բայց գիտէ նա արդեօք թէ իւր պատմածը միւս գործի հետշարայարված է, գիտէ՞ թէ որտեղ և ի նշպէս գրված է, կարող է արդեօք դրել ճանաչողաբար իւր պատմածը, իսկ սմանք տեսած ունի՞ն Աւետարանը և դոնէ մի անգամ կարդացած: Պատահած է մեզ մի քաղաքում մի ժողովրդական դպրոցում, ուր կսովորէին քրիստոնեայ, երբայցի և մահմետական մանուկներ, հարցնել մահմետական մանուկից Մահմետի մասին և տղան մանրամասնաբար պատմած է իւրեանց մարգարէի կեանքը, երբայցի տղան պատմած է Մովսէսի մասին, իսկ երբ դարձանք քրիստոնեայ մանուկին հարցնելով Յիսուսի կեանքը, տղան պատասխանեց. « մենք դեռ ևս չենք սովորել, » մենք Փարաւօնի երազներ կսովորենք: Այնուհետև զանազան դպրոցներում առաջարկած ենք աշակերտներին պատմել Յիսուսի կեանքը, և չեն կարողացած պատմել: Առանձնապէս Յիսուսի յարութիւն, համբարձումն, պայծառակերպութիւն և այլն իմացած են, իսկ Փրկչի բոլոր կեանքը շարունակաբար ոչ որ կարողացած է պատմել:

Շատ անգամ ոչ թէ մանուկների, այլ հասակաւոր քրիստոնեաների և մահմետականների հետ ևս խօսած ենք: Մահմետականները զարմացրել են միշտ իւրեանց մարգարէի մասին ունեցած հարուստ մինչև անգամ մանր առասպելական տեղեկութիւններով և նորա վերայ յափշտակմամբ կիսուն միշտ: Իսկ քրիստոնեաները մեծ մասամբ սակաւ կճանաչեն իւրեանց Տէրին:

Յաւալի է, կկրկնեմ, տեսնել, որ քրիստոնեայ մանուկները գիտեն Փարաւօնի երազներ, բայց չգիտեն Յիսուսի ծնունդը, Աւետարանը կեանքի կանոնադիրք լինելով, մանուկներին առանձին հոգաբարարձութեամբ և սէրով աւանդելու է Յիսուսի կեանքը, որ նորա իմանան և կարողանան պատմել այն անընդհատաբար, որ նորա ամենքը ճանաչեն և բոլոր սրտով սիրեն Փրկչին և նորա վարդապետութիւնը:

Ամփոփելով խօսքս, կդառնամ մտածող Հայերին. Հայեր, եղբայրներ, մի՛ մոռանաք, որ մեր արմատական հիմը և մեր գոյութիւնը մեր առաքելական կրօնն է, Քրիստոսի սուրբ, յաւիտենական ճշմարտութիւն: Այս կրօնով կդաստիարակվէին մեր նախնիները, սորանով իւրեանց կհամարէին ազգ և սա թողին մեզ ժառանգութիւն իբրեւ վսեմ սրբազան աւանդ: Թող մեր լուսաւորութիւնը յառաջ գնայ, բայց նորա հիմը պիտի լինի յաւիտենան անփոփոխ և անսասան in succum et in sanguinem (մարմնի և արիւնի



մէջ) արմատ բռնած հայ առաքելական կրօնը՝ Սոյն այս կրաղձայ մեր Վեհափառ Հայրապետը, որ քաջարթուն պաշտպան և հովանաւոր հանդիսանալով հոգեւոր եկեղեցական դպրոցներին և ամեն տեղ նոյն հոգեւոր երկսեռ դպրոցները հիմնելով, կ'որդորէ և կ'պատուիրէ որոնք մասնակից են ազգային լուսաւորութեանը, կրօնը և գիտութիւնը անբաժանաբար քաղաքակրթութեան և մարդավարի դաստիարակութեան էական և անհրաժեշտ պայման ճանաչել։ «Այս է յաւիտենական կեանքը, որ Քեզ միայն ճշմարիտ Աստուած ճանաչեն և Յիսուս Քրիստոսին, որին դու ուղարկեցիր» — ասաց նոյն ինքն մեր Փրկիչը (Յովհ. 17, 3)։

Վարսի թղթակից Պ. Վարապետ Տէր Մարգարեան հետեւեալ տեղեկութիւններ կ'հաղորդէ «Արարատին»։ «Վարսի գրադարանի գործավար ժողովը գրադարանի այն աւելորդ գրքերը, որոնք երեք օրինակէն աւելի էին, վիճակահանութեան էր դրած յօգուտ գրադարանի։ Հասարակութիւնը շատ համակրեց և վիճակահանութենից գոյացաւ 100 ռուբլուց աւելի, որը գործադրելու են ընթերցարանի համար օգտակար գրքեր գնելու։

Ուրախալի է այն երևոյթը, որ Վարսի կանայք հեռացնելով իրանցից նախապարմունքները և հին սովորութիւնները, սկսել են իւրեանց վանդակապատ կեանքի ընթացքից յառաջ ընթանալ և վստահութեամբ մասնակցել ազգային գործերին։

Քանի մի յարգելի տիկիններ, որոնք մեծ շնորհակալութեան արժանի են, առաջին անգամ օրինակ հանդիսանալով ուրիշներին, համարձակեցին այցելութիւն անել գրադարանին և ներկայ լինել դասախօսութեանը։ Նոցանից ոմանք բաժանորդ գրվեցան գրադարանին և ոմանք ընծայաբերութիւններ արին։

Տեղիս առաջնակարգ վաճառական Հաճի Յարութիւն Մխճեանի ղուստը Տիկին Մարիամ Մկրտչեանը այցելութիւն արեց ուսումնարանին և 100 ռուբլի նուիրեց և խոստացաւ չմոռնալ իւր հայրենիքի զաւակներին գնալով Վարին։

Տեղիս մեծապատիւ հոգաբարձութեան ջերմ աշխատութեան շնորհով, արդէն Վարսի օրիորդական դպրոցի շինութիւնը և ներքին ամեն հարկաւորութիւններ պատրաստ են։ Այժմ կ'մնայ հոգալ աշխատասէր և բանիմաց ուսուցիչներ և վարժուհի։

Պէտքէ խոստովանել որ մեր հոգաբարձութիւնը տնտեսական մասում օրինակելի հոգացողութիւն և աշխատութիւն ունի ուսումնարանի վերայ։

Վարսի Հայերի սրտին մեծ ուրախութիւն պատճառեց այն լուրը, որ Վեհափառ Հայրապետը Վարսի առաջնորդ Հայր Աղուանեանին Եպիսկոպոսական բարձր աստիճանին արժանացրեց, ցոյց տալով որ արժանաւոր հոգեւորականներին գնահատել գիտէ Վեհափառ Վաթողիկոսը։

Գէորգեան Ճեմարանի քննութիւններն վերջացան նշանակված ժամանա



կին, յունիսի 10ին, Բենուլթիւններն յաջող էին. գրեթէ բոլոր աշակերտներն իւրեանց ստացած թուանշանների զօրութեամբ փոխեցին դասարանները: Միայն 7 աշակերտին, որոնք 2 էին ստացել ոմն Հայերէնից, ոմն Ֆրանսերէնից, ռուսերէնից կամ թուաբանութենից, կրկնաքննութիւն նշանակվեցաւ օգոստոսի վերջին: Սեպտեմբերին բացվելու է վեցերորդ դասարան, որ դպրանոցական դասընթացի վերջին դասարան է: Յուսարի է, որ յետագայ դպրոցական տարին աշակերտներն առաւել ջերմեռանդութեամբ և արդիւնաւորութեամբ պարապեն: մտածելով թէ ինչ յոյսեր կտածեն նոցա մասին Վեհափառ Խնամակալը և բոլոր ազգը: Տար երկինք:

### ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

ԲԱՂԱԽԱԹԲ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՅ ՍԻՆՕԴԻ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇՆԻ:

Ի 27 ապրիլի 1879 տմի. Ըստ բարեհաճ կամաց Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց հրամանագրեցաւ Աբրահամ վարդապետին ղնալ ի վանս Մոզնոյ եւ ստացեալ ի Ղուկաս վարդապետէ զամենայն ի ծեռս նորա դտանեցեալ վանահայրական Թուղթս, զհաշիւս, զարդս, անօթեղէնս Տաճարին, զկահ եւ կաքասիս եւ զկալուծս վանուցն օրինաւոր ցուցակու վարել զպաշտօն վանահայրութեան ըստ հրահանգութեանցն լուեկոց ի Սինօզէ նախորդի խորյ ամենայն հաւատարմութեամբ, իսկ զցուցակն յանձնողական եւ ստացողական ընդ ստորագրութեամբ ևրկօցունցն առաջի առնել Սինօզիս: Զայսմ անօրէնութենէ Սինօզիս ծանուցեալ Ղուկաս վարդապետին պատուիրել յետ յանձնելոյն զվանահայրական հաշիւս Աբրահամ վարդապետի, մնալ անդ ի միաբանակցութեան:

Ի 30 ապրիլի 1879 տմի. Ունելով ի նկատի զի պահանջք Գրիգոր վարդապետի վանահօր Մակարայ վանից զՊօղոս վարդապետէն ողպէս երեւի ի քննութենէն զոր՝ ծելոյ ընդ ծեռն Մուշեղ քահանայի տէր Ղեւոնդեան, են ըստ ամենայնի անհիմն եւ զրպարտութիւն, եւ յառաջացեալ միմիայն ի Թեմեամտութենէ եւ յընչաքաղցումենէ նորոս ի անարապարտուց, ուստի եւ Թողեալ զայն առանց հետեւանաց ընդ ծեռն կոնսիստորիային Վրաստանի վերադարձուցմամբ քննութեան, յայտնել նմա զանբաւականութիւն իշխանութեանս, խստիւ պատուիրելով չլստահանալ միւս անգամ անտեղի պրարութեամբ ծանծրացուցանել զիշխանութիւնն:

Ի 18 մայիսի 1879 տմի. Տուան իրաւունք հոգեւոր կառավարութեան ելիսաւ. տօպօլու համաձայն համախօսական Թերթին ժողովրդականաց սուրբ Յովհաննէս եկեղեցւոյ քաղաքին, հաստատել ի պաշտօն հոգաբարձութեան շինութեանց երկսեռ հոգեւոր դպրոցաց, կրպակաց եւ յաջորդարանի ի պարտիզի սուրբ Յովհաննէս եկեղեցւոյ քաղաքին, զպարոն Յակոբն Վիսիկեան, զպարոն Յովհաննէս Փամպեան, եւ զպարոն Յովհաննէս Խոսհակեան, պարտաւորելով զնոսա խորհրդակցութեամբ եւ գործակցութեամբ երեսփոխանի յիշեալ եկեղեցւոյ պարոն Ներսէս Տէր Ներսէսեանի փոյթ կալցին պատրաստել զամենատեսակ նիւթս շինութեանց, իսկ երեսփոխանին